

ՀԵՏԿ ՈՒՆԵՑԱՒ ԻՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ՖՐԷՁՆՈՅԻ ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ

Փետրուար 19-20, բոլոր շրջաներէն Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան անդամները հաւաքուեցան Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ մէջ եւ ունեցան իրենց ՀԵՏԿ Տարեկան Ղեկավարներու Համագումարը՝ գլխաւորութեամբ Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Աւետիս Քինյ. Աբովեանի: Շուրջ 50 անդամներ եւ Հոգեւոր Հովիւներ մասնակցեցան համագումարին, որուն գլխաւոր նիւթերն էին գումարներու իմաստուն գործածութիւնը եւ նուիրահաւաքը: World Vision-ի եւ զանազան կազմակերպութիւններու մասնագէտները օգտակար բանախօսութիւններ ներկայացուցին աշխատանիստերու ընթացքին:

Աշխատանիստերու ընթացքին մասնաճիւղերը խումբերու բաժնուեցան ծանուցումներ եւ եկամուտ ապահովելու համար յատուկ յայտարարութիւններ պատրաստեցին՝ հիմնուելով իրենց տրուած դասախօսութիւններուն վրայ: Վստահ ենք, ՀԵՏԿ մասնաճիւղերու անդամները իրենց ներկայացուած դաստիարակչական դասախօսութիւններու շնորհիւ, պիտի կարենան յաջողութեամբ նուիրահաւաք կատարել ապագայ ձեռնարկներու համար, ինչպէս նաեւ նոր միջոցներով պիտի պատրաստեն իրենց ծանուցումներն ու յայտարարութիւնները:

ՀԵՏԿ Արեւմտեան Թեմի Կեդրոնական Խորհուրդը շատ գոհ մնաց Ղեկավարներու Համագումարի արդիւնքէն եւ կը յուսայ թէ, ժամանակի ընթացքին բոլոր մասնաճիւղերն ալ նիւթապէս նորանոր յաջողութիւններ պիտի արձանագրեն իրենց Ծուխերէն ներս: